ԲԱՐՈՑԱԿԱՆ

ԲՆԱՐ ՀԱՅՈՑ

Երգէ քաղցրիկ քնարն Հայոց,
Ի գագաթանց սուրբ Մասեաց,
Ողջոյն սիրոյ տուեալ ափանց,
Ուր վեհ պարծանք զի՛ ցաղանց,
Ո՜վ դուք, մուսա՛յք Հայոց մեծաց,
Ընդէ՞ր ոստիք, ո՞հ ի լաց,
Գիտեմ ասէք թէ ,, զի՞նչ հրճուանք
Մինչ կորուսաք զմեր փառք,
Ահա՛ երկին սրբաւփայլ,
Պայծառ արփին ոսկեփայլ.
Նաղէ լուսինն փայլ ի փայլ,
Աստեղք ցոլան վառ ի վառ.
Փթթին նարգոս և շուշան,
Վարդ համասփիւռ անթառամ
Ծաղկունք ամեն երփնազան
Ոսկեծղի շողշողան.
Հրեշտակն Հայոց էջ սաւառնեալ
Զդրոշ Հայուն, անդ ի յերկնից մերս Հայ-
բենեաց.
Եւ սուրբ պսակ հիւսեալ զանդ գոռ սարդենիս,
Ընդ եղևնիս ու ընդ նոճիս,
Ցանմահ ճակատ Հայոց գնդին.
Ոյք հայրենիք սիրեցին.
Գնան, գոչեն, առուք հեզասահ ի կարկաջ,
Ընդէն և գետք, անդէն և ծովք տան շառաչ,
Ժայռք և քարինք ողորկելով,
Զանցեալ զփառս, ո՜հ. սգալով.
Աւա՜ղ մանկտեաց մեր հայկազեան,
Ա՞յսպէս անյոյս թափառական,
Ա՞յսպէս տրտո՜ւմ, տխո՜ւր, և հէգ
Լացցեն զաղէտս բազմավէպ.
Լսէք արդեաք՝ որդիք հայկեան,
Զձայն քնարիս Արարատեան,
Որ բարձրացեալ ի սուրբ լերին,
Ողբ և հառաչ հանեն յերկին.
Այլ դու ո՞վ Տէր, ո՞վ Արարիչ, ո՞վ Աստուած,

Տո՛ւր զօրութիւն մանկտոյն Հայկայ վշտա-
տանք,
Սուրբ սէր, անբիծ հաւատք, և յոյս և բերկ-
րանք.
Զի օրհնեսցեն Քո սուրբ անուն յաւիտեան,
Տացեն Քեզ միշտ փառս և պատիւ անվախ-
ճան.

Մնրտէ Յակոբեան Օշականոյ։

յԱխ-ոյ։

ԱՐԱՐԱՏ

Թռչիլ փութաս, ո՞վ Արարատ,
Քո սուրբ թևաքդ ամանորոգ.
Շքեղ անուամբ վեհին պանծաս,
Ո՞ւր որ երթաս յաջող գնաս.
Ո՞ւր որ գիմես ո՞ւր որ իջնաս,
Քո ժիր թևաքդ յառաջանաս.
Թէ՝ հանդիպիս իմ ազնէից,
Ինձ լաւ լուրեր բերել պիտիս,
Նաև թռչիս ի հող օտար,
Ուր կ'տեսնես շատ հայ եղբայր.
Թէ բարեբաղդ թէ տարաբաղդ,
Ողջոյն կ'տաս հարազատաց.
Նոքա կարօտ քեզ կան յաւէտ,
Լսել բանից քոց օգտաւէտ.
Գիտեմ լսեն քեզ շատ սիրով,
Երթ քարոզեա դու ջերմ սրտով.
Փութա՛ կրկնել յոյժ գոհ հոգւով,
Իմ հայ եղբարցն հեռաւոր.
Թէ դուք տակաւ օտար հողում
Պահէք անեղծ զհայ անուն,
Պիտի սլանաս միշտ Այրարատ,
Կարդալ մանկանցն հայկազանց.
Որ չմնան յանգիտութեան,
Այլ ասպարէզ բանան ուսման,
Մեծ են քոյդ բանք, թէ Ազգային,
Թէ կրօնական, բարոյական.
Առ քեզ աւանդ տար զխրատ,
Սիրել զկրօն զազգ և զհաւատ,
Գիտեմ կ'երթաս և շուրջ կուգաս,
Ուր որ երթաս յաջող գնաս.
Թէ հարցանեն զիւրեանց պետէն,
Ասես կայ տէր ձեր ազգաշէն.

Ո-ր. Մնրտէ Յովհաննէսեան։

ԱՆԶՐԵԻ

Մէկ հարուստ վաճառական ձիով վերադառնում էր տուն։ Նա գնում էր անտառվո. Նա ունէր իր մօտ մէկ մախաղ (չամադան), որի մէջը կար շատ փող։ Վաճառականը չը շտապեց որովհետև եղանակը լաւ էր և նա յոյս ունէր, որ երեկոյեանը կհասնի տուն։ Նա մէկ ժամի չափ հիւրանոցումը մնաց, և յետոյ շարունակեց իւր ճանապարհը — մեծ ճանապարհով։

Ցան կարծ երկինքը ծածկվեց ամպերով, վեր կացաւ քամի և սաստիկ անձրև եկաւ։ Վաճառականին չունէր վերարկու, և նա բոլորովին թրջուեց։ Այս բանը նրան այնքան բարկացրեց որ նա նայեց երկնքի վերայ տրտնջալ, որը ուղարկել էր անձրև և որը ուշացրեց նրա ճանապարհորդութիւնը և տխրութիւնը ընտանեաց հետ